

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի երկրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2017 թվականի երկրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 2970 թղթակցություն, առաքվել՝ 2609 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Նախագահի աշխատակազմից՝ 1, ՀՀ Ազգային ժողովից՝ 1, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 2, ՀՀ կառավարությունից և վարչապետից՝ 280, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 299, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 505, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 795, քաղաքացիներից՝ 1079 դիմում, գաղտնի թղթակցություն՝ 8: ՀՀ Նախագահի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 2, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 33, ՀՀ նախարարություններից՝ 2, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 2 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2017թ. երկրորդ եռամսյակում կատարվել է 203 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվում նաև ՀՀ Նախագահի աշխատակազմ: